ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ-ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԺԳ ԴԱՐՈՒՄ-ԺԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Վերջին տարիներին հայոց եկեղեցու պատմությանը նվիրված ուսումնասիրություններում տեղ են գտել նոր հարցադրումներ, որոնք թույլ են տալիս վերագնահատել նրա գործունեության հետ կապված ավանդական պատկերացումները: Նման մոտեցում անհրաժեշտ է դրսևորել նաև ԺԳ դարի-ԺԴ դարի սկզբի հայոց եկեղեցու պատմության մի շարք հիմնախնդիրներ նորովի ներկայացնելու և պարզաբանելու համար: Խոսքն ամենից առաջ վերաբերում է հայոց կաթողիկոսության տեղագրականոնական կազմակերպման խնդիրներին, առանձնահատկություններին և հեռանկարներին: Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայոց կաթողիկոսության ավանդական կազմակերպման վերակառուցման հետ աղերսվող հիմնախնդիրների առաջացումը կապված էր հայկական միջավայրերում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների հետ:

Հայկական էքնիկական ընդհանրությունը Մեծ Հայքից դուրս զբաղեցրել էր այլ տարածքներ և յուրացրել ինքնակազմակերպման նոր հատկանիշներ, ուստի խախտվել էին ավանդական պատկերացումները էքնոսի տեղագրական կազմակերպման սահմանների և սկզբունքների վերաբերյալ: Չևավորված իրավիճակում հայոց եկեղեցին պետք է փորձեր Մեծ Հայքից դուրս տարաբնակեցված հայերին պահել իր ազդեցության շրջանակներում: Սա նոր խնդիր չէր, սակայն ԺԳ դարի առաջին կեսին տեղի ունեցող փոփոխությունները այլ ճանապարհներ էին առաջադրել: Հայոց թագավորության հռչակումը Կիլիկիայում ևս իր կնիքը դրեց եկեղեցու գործունեության, մասնավորապես կաթողիկոսության կազմակերպման և կառուցվածքի վրա: Խնդիրը ոչ այնքան այն է, որ եկեղեցին սովորաբար իր կազմակերպման ձևերը գտնում է քաղաքական համակարգի շրջանակներում, որքան Կիլիկիայում հայկական պետականության առաջացումը փոխել էր ավանդական պատկերացումները էքնոսի քաղաքական կազմակերպման սահմանների վերաբերյալ: Արտաքին միջավայրում տեղի ունեցած կարևոր փոփոխություններից էին՝ բյուզանդական

կայսրության թուլացումը, մոնղոլական արշավանքները, Եգիպտոսի հզորացումը, խաչակրաց տիրույթների անկումը և պապականության արևելյան քաղաքականության ակտիվացումը:

Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո կաթողիկոսական աթոռը շուրջ հարյուր տարի դեգերումներից հետո հաստատվեց Եփրատ գետի ափին գտնվող Հռոմկլա բերդաքաղաքում: Տեղի ընտրությունը պատահական չէր, քանզի մեծ քանակությամբ հայ բնակչություն հաստատվել էր Փոքր Ասիայի կենտրոնական և հարավ-արևելյան շրջաններում: Այստեղ տեղի էին ունենում հայ հասարակության քաղաքական ինքնակազմակերպման նոր գործընթացներ, որոնց մասնակցում էր նաև պետականության որոշակի հատկանիշներով օժտված հայոց եկեղեցին: Քննարկվող ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքը վերածվել էր միջազգային հարաբերությունների բարդ հանգույցի, ուր բախվում էին քրիստոնեության և իսլամի, ինչպես նաև քրիստոնեության տարբեր ուղղությունների շահերը և հետաքրքրությունները; Տարածաշրջանում շոշափվող խնդիրները այս կամ այն կերպ աղերսվում էին նաև հայկական էթնիկական ընդհանրության հետ, ուստի հայոց կաթողիկոսությունը չէր կարող չներքաշվել Մերձավոր Արևելքում ծնավորվող գործընթացներում: Փաստորեն հայոց կաթողիկոսությունը ԺԳ դար թևակոխեց մի շարք խնդիրներով ծանրաբեռնված, որոնցից առանձնակի կարևորություն էր ստացել կանոնա-տեղագրական միակենտրոն համակարգի ծնավորումը. «Արդ, ի հայրապետութեանն ոչ գիտեմ ասել եթե զում գրեցից անուն, այլ ասեմ թե երից հակառակաց՝ տէր Յովհաննիսի, տէր Անանէի եւ տէր Դաւթի...»[1]:

Հովհաննես Զ Սսեցի. Հռոմկլայի կաթողիկոս
Անանիա Սեբաստացի. Սեբաստիայի կաթողիկոս
Դավիթ Արքակաղնեցի. Սսի կաթողիկոս

Այս ցանկին պետք է ավելացնել նաև Աղվանքի, Աղթամարի և Անիի կաթողիկոսությունները: Նման իրավիճակը երկար չտևեց. սակայն չհաջողվեց այն ամբողջովին հաղթահարել, քանզի Հռոմկլայի կաթողիկոսությանը զուգահեռ իրենց գոյությունը պահպանեցին Աղվանքի և Աղթամարի կաթողիկոսությունները:

Հռոմկլայում հաստատված կաթողիկոսությունը դիտվում էր որպես համահայկական, սակայն ձևավորված իրավիճակում այն ավելի շուտ խորհրդանշական բնույթ ուներ, քան իրողություն էր: Հայոց կաթողիկոսության

---

[1] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 75:

կազմակերպումը Մեծ Հայքում հանգրվանում էր այնպիսի հատկանիշների վրա, որոնց մի մասը նոր պայմաններում իրենց չէին կարող գտնել: Համահայկական կարգավիճակ ձեռք բերելու համար Հռոմկլայի կաթողիկոսությանը անհրաժեշտ էր լուծել մի շարք խնդիրներ, մասնավորապես յուրացնել կենտրոնին հատուկ հատկանիշներ և մշակել այն սկզբունքները, որոնց միջոցով պետք է կարգավորեր փոխհարաբերությունները տարաբնույթ միջավայրերում գտնվող թեմերի հետ: Համահայկական կենտրոնին հատուկ հատկանիշները կարելի է ստորաբաժանել. կանոնական, տեղագրական, մշակութային և արժեքային կողմնորոշման:

Նախ փորձենք պարզաբանել կենտրոնի խնդիրը: Զարգացման որոշակի աստիճանի հասած յուրաքանչյուր հասարակություն փորձում է ստեղծել մշակութաքաղաքական կենտրոն: Սնիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայ հասարակության համար ևս նման խնդրի լուծման անհրաժեշտություն առաջացավ: Կիլիկիայում առաջացած հայկական պետականությունը, Զաքարյանների և Օրբելյանների իշխանությունները Հայաստանում փորձում էին իրենց վ ր ա վերցնել կենտրոնի գործառույթները:

Կենտրոնը կամ մշակույթի կենտրոնական գոտին էթնոսի մշակութային մոդելի մեջ ներառված ավանդույթի, արժեքների, գաղափարների, որոնց միջոցով կառավարվում է տվյալ հասարակությունը, հավաքատեղին է: Եթե համահայկական քաղաքական կենտրոնը բացակայում էր, ապա Հռոմկլայի կաթողիկոսությունը պետք է փորձեր յուրացնել մշակութադավանաբանական կենտրոնին անհրաժեշտ հատկանիշներ:

Այժմ փորձենք պարզաբանել այն սկզբունքները, որոնց միջոցով Հռոմկլայի կաթողիկոսությունը պետք է կարգավորեր ենթակենտրոնների գործունեությունը:

Ա Կանոնական. քրիստոնեական եկեղեցին կազմակերպվել էր ուղղահայաց սկզբունքով և հարաբերությունները կարգավորվում էին կանոնական իրավունքի սահմաններում: Այս կառույցը յուրացրել էր նաև հայոց եկեղեցին:[2] Պարզ է, որ հայոց կաթողիկոսությունը աշխատում էր պահպանել կանոնական գերակայության իրավունքը, քանի որ նա էր ապահովում եկեղեցու կազմակերպման աստիճանակարգությունը և թեմական բաժանումը: Վերջինս առավել կարևոր էր հայոց կաթողիկոսության համար, քանզի թեմերի մի մասը գտնվում էին տարաբնույթ միջավայրերում. «Եւ ոչ ամենեւին ի սահմանադրութեանց

---

[2] Սմբատ Սպարապետ. Դատաստանագիրք, Հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Գալստյանի, Երևան, 1958, էջ 26-27:

եկեղեցոյ՝ եւ ոչ ի սահմանաց թեմերոց իշխէ ոք փոփոխել բնաւ առանց կաթողիկոսի՝ որ մեծ ժողովի տեսով այնէ»[3]:

Բ Տեղագրական կազմակերպման շրջանակներում լուծվում էր այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է կանոնական գերակայության սահմանների ճշգրտումը: Սա կարևոր էր նրանով, որ տեղագրական կազմակերպման շրջանակներում հաճախ առաջնացվում էին կարգավիճակային ենթակենտրոններ: Տեղագրական կազմակերպման շնորհիվ կանոնական աստիճանակարգությունը ստանում էր տարածական սահմաններ:

Գ Մշակութադավանաբանական. քննարկվող ժամանակաշրջանում հայկական էթնիկական ընդհանրության կազմակերպման շրջանակներում ձևավորվել էր այնպիսի իրավիճակ, երբ բացակայում էին հաստատուն հատկանիշներով օժտված էթնո-մշակութային սահմանները և կաթողիկոսության կազմակերպումը պետք է ճշգրտեր հայկականության սահմանները: Այս սկզբունքի համար կարևորը ոչ միայն տարածական հատկանիշն էր, այլև մշակութադավանաբանական նույն միջավայրին պատկանելու ինքնագիտակցումը: Փաստորեն մշակութադավանաբանական սկզբունքի շրջանակներում էր ձևավորվում հոգևոր տարածքի սահմանները, իսկ հակառակ դեպքում դրանք ձևախախտում էին. «...Կիլիկիա բոլոր՝ որ տեղի էր մեր պարծանաց, յայս իսկ վարակեալ կայ. և գլխաւոր քաղաքք որ ի Հոռոմք ի սոյն մոլորեալ են. և եհաս մինչև առ մեզ: Զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն ի Տփխիս. և ի հին տունն Բագրատունեացն յԱնի՝ որ ի Շիրակ: Նաև ի Թավրէժ շահաստան և յայլ բաւում տեղիս:

Ահա ո՞մնաց ի Հայոց ի հայրենի աւանդութեան. միայն սինլիքորքն յանկեան ուրեք...»[4]:

Դ Արժեքային կողմնորոշումը. խնդրահարույց ժամանակահատվածում հայ հասարակության մի մասը գտնվում էր էթնո-քաղաքական և մշակութային տարաբնույթ միջավայրերում, ուստի կարևոր էր նաև արժեքային կողմնորոշման խնդիրը: Հայոց կաթողիկոսությունը պետք է կարողանար մշակել արժեքների այնպիսի համակարգ, որը ընդունելի լիներ տարաբնույթ միջավայրերում գտնվող հայ հասարակության համար: Էթնիկական ընդհանրության ներսում միշտ առկա են արժեքային տարաբնույթ կողմնորոշումներ, որոնք կարգավորում են հարմարվելու և պահանջմունքները բավարարելու խնդիրները: Փաստորեն, Հռոմկլայի կաթողիկոսությունը պետք է մշակեր հայոց

---

[3] Նույն տեղում, էջ 30:
[4] Տեառն Ստեփանոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կոստանդնուպոլիս, 1756, էջ 43:

եկեղեցու կազմակերպման նոր մոդել, որը պետք է կարգավորեր հայկական էքնիկական ընդհանրության հոգևոր միջավայրը: Այս տեսակետից հետաքրքիր է Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսի (1221-1267) տիտղոսաշարը. «Կոստանդին ծառայ Քրիստոսի և շնորհօք նորին կաթողիկոս ամենայն հայոց, օրհնութեամբ և ողջունիւ և սիրովն աստուծոյ՝ ծանուցանեմ լրման եկեղեցւոյդ Հայաստանեայց, վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և մեծավաստակ նահատակին Գրիգորի և մերում կըսերութեանս...»[5]: Բանաձևի «ամենայն հայոց» մասը մատնանշում է, որ Հռոմկլայի կաթողիկոսությունը փորձում էր կազմակերպվել համապատասխանաբար այն սահմաններում, որը զբաղեցրել էր հայկական էքնիկական ընդհանրությունը: Հաջորդ կարևոր խնդիրը, որ լուծում է այս հատվածը Հռոմկլայի կաթողիկոսության գերակայության մատնանշումն է, քանզի գոյություն ունեին Աղվանքի և Աղթամարի կաթողիկոսությունները: Հայոց եկեղեցին ներքաշվել էր Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերությունների ոլորտ, ուստի անհրաժեշտ էր, որ նրա կենտրոններից մեկը արտաքին միջավայրում ներկայանար որպես համահայկականության կրող:

«Ամենայն» հասկացությունը իր մեջ ներառում էր Մեծ Հայքը, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի հայկական միջավայրերը: Այս դեպքում Հռոմկլայի կաթողիկոսության համար դժվար էր ձևավորել կենտրոն, ծայրամասեր և շփման գոտիներ: Կենտրոնի գործառույթները իր վրա կարող էր վերցնել ինչպես էքնոսի ձևավորման պատմական միջավայրը, այնպես էլ նրա կողմից հետագայում զբաղեցրած տարածքներից որևէ մեկը: Այստեղից էլ վերոհիշյալ միջավայրերից յուրաքանչյուրը իր մեջ թաքցնում էր կենտրոն դառնալու հնարավորություններ:

Ա Մեծ Հայքը կարող էր իրականացնել մշակութաղավանաբանական կենտրոնի գործառույթներ, քանի որ նա հայկական էքնոսի ձևավորման պատմական և մշակույթի ավանդական միջավայրն էր. «Եւ մանաւանդ առաւել տենչմամբ սրտի սիրելով զհայրենի և պարծելի բնիկ Հայկազանց աշխարհն՝ զՏունն Արևելից՝ որ առաջին է մասն և գլուխ աւրինակ իմն բոլոր աշխարհի...»[6]: Կաթողիկոսության կազմակերպման մեջ որոշակի էր եկեղեցական ավանդույթի այն հատվածը, որը վերաբերում էր Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին. «...վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմեոսի»: Պատահական չէ, որ Կոստանդին

---

[5] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ս. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 301:
[6] Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 570:

Բարձրաբերդի կաթողիկոսի շրջաբերականով վերականգնվում է Թադեոս առաքյալի թեմը. «...և շրջաբերական նամակ շիրմի առաքելոյն Թադէոսի տալ նմա վիճակ զշրջակայ գաւառսն և զքաղաքսն և ոսկի յոլով ի շինութիւն գաւթին...»[7]:

Բ Հայկական եքենիկական ընդհանրության մշակութադավանաբանական կենտրոն դառնալու համար Կիլիկյան Հայաստանը ևս ուներ որոշակի հնարավորություններ: Վերոհիշյալ միջավայրերից նա առանձնանում էր նրանով, որ ուներ հայկական վարչաքաղաքական սահմաններ:

Գ Մշակութային կենտրոն դառնալու ամենաքիչ հնարավորություններ ուներ Փոքր Ասիայի հայկական միջավայրը, ուստի նա աշխատում էր յուրացնել որոշակի իրավունքներ ունեցող ենթակենտրոն կարգավիճակը:

ԺԳ դարի երկրորդ կեսին հայ հասարակական-քաղաքական միտքը վերստին անդրադարձավ եկեղեցական նվիրապետության կազմակերպման պատրիարք-կաթողիկոս աստիճանների խնդրի քննարկմանը: Սա կապված էր ոչ միայն հայկական միջավայրերում ձևավորված իրավիճակի, այլև հայհունական և հայ-լատինական միջեկեղեցական փոխհարաբերությունների հետ: Քրիստոնեության տարածմանը զուգահեռ տեղի էր ունենում ինքնամփոփ եկեղեցական կառույցների ձևավորում: Երկարատև հակամարտությունից հետո տիեզերական եկեղեցին իր համակեցության շրջանակներում որպես նվիրապետության բարձրագույն դաս ընդունեց հինգ պատրիարքություն. Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ[8]: Եկեղեցական ինքնամփոփ համակարգի մյուս կարևոր հատկանիշը նվիրապետության ինն աստիճանի առկայությունն էր[9]:

Հայոց եկեղեցին ևս պետք է աշխատեր յուրացնել ինքնամփոփության համար սահմանված հատկանիշները. «...այսպէս զետեղեալ սահմանեցին զինն դասս եկեղեցւոյ, Հայոցն՝ պատրիարք. Աղվանիցն՝ արքեպիսկոպոսութիւն. Սիւնեացն՝ մետրապօլիտ»[10]: Հայ հասարակական-քաղաքական միտքը շրջանառության մեջ էր դրել հայոց հոգևոր նվիրապետության կազմակերպման երկու մոդել՝ կաթողիկոսական և պատրիարքական: Ընդունելով, որ երկու մոդելն էլ արտահայտում են հայոց եկեղեցու ինքնամփոփությունը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ խոսքը վերաբերում է նրա կազմակերպման եքնո-

---

[7] Կիրակոս Գանձակեցի, էջ 311:
[8] Поснов М. История христианской церкви (до разделения церквей-1054г.) .Киев. 1991, с. 285-300.
[9] Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 64:
[10] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 106:

քաղաքական և տարածամշակութային հատկանիշներին: Սակայն հայոց եկեղեցին ավելի հաճախ օգտագործում էր կաթողիկոս տիտղոսը, քան պատրիարք. «Եւ ասա, զի՞նչ է Պատրիարքն, ո՞չ քաղաքի միոյ եպիսկոպոս. իսկ կաթուղիկոսն Հայոց՝ պետ ազգի միոյ ողջոյն

Բայց զչորսս զայսոսիկ որ անուներիակ երևին, ցուցցուք. թէպէտ և ի մերոցս ոմանց քար ընդ ոտն թուի:

Առաջինն՝ կաթուղիկոսն Աղուանից: Երկրորդն՝ եպիսկոպոսն Սիւնեաց, զոր զկնի սորա նախապատուեցին կաթուղիկոսքն Հայոց: Երրորդ՝ եպիսկոպոսն Հաղբատայ, որ ունի զտեղապահութիւն կաթողիկոսին Վրաց, զտեսչութիւն բոլոր Գուգարաց: Չորրորդ՝ եպիսկոպոսն Ռշտունեաց և Մոկաց, որ նստի ի Տոսպ գաւառի յԱղթամար կղզի»[11]: Սա հայոց կաթողիկոսության կազմակերպման այն կառույցն է, որը ձևավորվել էր ԺԳ դարի կեսերին:

Եկեղեցու կառավարման միավորը թեմն էր, իսկ թեմերը հավաքվում էին միտրոպոլիտությունների մեջ: Դրանց շրջանակներում ձևավորված պատրիարքական աթոռները, բացառությամբ Երուսաղեմի, իրենց բարձրացմամբ պարտական էին քաղաքական կենտրոններ լինելու իրողությանը: Այստեղից էլ ծնվել է հարցադրումը. «...զի՞նչ է պատրիարքն, ո՞չ քաղաքի միոյ եպիսկոպոս...»:

Հայոց կաթողիկոսության ձևավորման հիմքում ընկած էր էթնո-մշակութային համակարգ-սկզբունքը. «...իսկ կաթուղիկոսն Հայոց՝ պետ ազգի միոյ...»: Հայ հասարակական-քաղաքական շրջանակները երբեմն օգտագործում էին նաև պատրիարք անվանումը, սակայն այն լայն քաղաքացիություն չստացավ: Հաշվի առնելով հայ հասարակության տարաբնակեցման առանձնահատկությունները, սահմանվեց. «Ի սոյն աստիճան (իմա՝ արքեպիսկոպոսություն) են կաթողիկոսք, որ թարգմանին ընդհանրակաք. բայց ունին առաքելութիւն պատուոյ քան զարքեպիսկոպոս, զայս՝ զի ոչ եթէ յիւր վիճակին միայն, այլ ընդ ամենայն տեղիս՝ ուր ազգքն իւր և համացեղքն են, ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ զմիռոնն, վասն այնորիկ անուանի և կաթողիկոս»[12]: Այս դեպքում կարևոր էր ոչ թե տիտղոսների անվանումները, այլ համակարգային հատկանիշների ձևավորումը: Դրանց դերում կարող էին հանդես գալ. ա/ եպիսկոպոսությունները որպես հոգևոր տարածքի բաժանման

---

[11] Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեւռացւոյ Յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց, Յերուսաղէմ, 1865, էջ 66-68:

[12] Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 591:

միավորներ, բ/ ծիսակարգը, որը ծնավորում էր ընդհանուր տարածաժամանակային միջավայր:

Հայկական եթնոսի տարաբնակեցման առանձնահատկությունները և քաղաքական միակենտրոն համակարգի բացակայությունը ավելի էին կարևորում եպիսկոպոսությունների դերն ու նշանակությունը: Պատկերը ավելի պարզ կդառնա, եթե հաշվի առնենք, որ թեմերի մի մասը գտնվում էին Մեծ Հայքից դուրս: Դրանք լուծում էին հետևյալ խնդիրները. ա/ ճշգրտում էին հայկական եթնոսի տարաբնակեցման սահմանները, բ/ վերահսկում էին նրա մշակութային գործունեությունը:

Քրիստոնեության շրջանակներում հայոց եկեղեցին մշակել էր ազգային ծիսակարգ: Այստեղ առավելապես նկատի ունենք Տոնակարգը, քանզի նրա միջոցով էր տարաբնույթ միջավայրերի համար ստեղծվում համաժամանակությունը, այլ խոսքով պատկանելությունը միևնույն տարածաժամանակային համակարգին: Այսպիսի իրավիճակը կարելի է բնութագրել որպես տարածաէթնոմշակութային համակարգ, քանզի կաթողիկոսության կազմակերպման համար երեք հատկանիշն էլ պարտադիր էին: Համակարգի յուրաքանչյուր մաս /տարածք, էթնոս, մշակույթ/ իր վրա վերցնում էր որևէ հատկանիշ:

Հայոց կաթողիկոսության կազմակերպան շրջանակներում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան, երբ կաթողիկոսական աթոռը Հռոմկլայից տեղափոխվեց Սիս /1292/: Չգտնվելով հայկական քաղաքական կազմավորումներից որևէ մեկի շրջանակներում Հռոմկլայի կաթողիկոսությունը սովորաբար աշխատում էր ներկայանալ վերնակենտրոն կարգավիճակով: Իրավիճակը փոխվեց, երբ կաթողիկոսությունը տեղափոխվեց Սիս և ներառվեց Կիլիկյան Հայաստանի վարչաքաղաքական համակարգում:



Հայ հասարակական-քաղաքական շրջանակներում կաթողիկոսական աթոռը Հայաստան վերադարձնելու գաղափարը միշտ կենսունակ էր: Այլ հարց է, որ նրա իրագործումը ինչ չափով էր համապատասխանում խնդրո առարկա ժամանակաշրջանում ձևավորված իրավիճակին. «... այլ կարծիս իմն բերեալ ի միտս եթէ ելանիցէ յայսմ իշխանութենէ և երթեալ ի վերին աշխարհն յարևելից. և անդ ընկալեալ լիցի պատուով կաթողիկոսութեան. և ի բաց հերքեսցի ի մէնջ...»:[13] Այս ժամանակ հայոց կաթողիկոսության վերադարձը Մեծ Հայք մնում էր որպես հեռանկար, քանզի. ա/ նրա տեղափոխումը Սիս որոշ ժամանակով հետաձգեց խնդրի լուծումը, բ/ փաստորեն Մեծ Հայքում չգտնվեց որևէ միջավայր, որը իր վրա վերցներ կաթողիկոսության տեղափոխման առաքելությունը. «... ըստ ձեր կամաց լիցի՝ աշխարհդ այդ և այլ ոք որ կամիցի. և զմեզ թողէ՛ք ի մեր ստրուկ գերութեանս...»:[14]

Կիլիկյան Հայաստանի վարչաքաղաքական համակարգում ներառված Սսի կաթողիկոսությունը համահայկական կարգավիճակ յուրացնելու համար պետք է ստեղծեր կենտրոնին հատուկ կառույց: Խնդրի լուծման ուղղություններից մեկն էլ կապվում էր Անտիոքի պատրիարքության հետ: Նրա նկատմամբ հայոց եկեղեցու հավակնությունները նոր չէին,[15] սակայն այս ժամանակահատվածում դրանք շրջանառվում էին այլ խնդիրներ լուծելու նկատառումներով. «... բայց մեզ արևելից կողմանցս ոչ ինչ ի վեր բերեալ ծանուցանէր. այլ միայն այսքան համբաւէր թէ՝ խնդրեմք զաթոռն Անտիոքու մեզ լինել. և վասն նուազեալ ժամանակիս կամիմք զմիաբանութիւն Հռոմոնց ընդ մեզ և զամենայն ազգաց...»:[16] Պարզ երևում է Սսի հայոց կաթողիկոսության առաջնահերթ խնդիրներից երկուսը՝ Անտիոքի պատրիարք տիտղոսի յուրացումը և եկեղեցիների միության հաստատումը: Միմյանց հետ փոխկապակցված այս խնդիրների լուծումը ենթադրում էր, որ Սսի կաթողիկոսությունը պետք է ծեռնամուխ լիներ հայկական դավանաբանական միջավայրի վերակառուցմանը: Այս նպատակով էլ հրավիրեցին Սսի /1307/ և Ադանայի /1317/ ժողովները:[17] Ճիշտ չէր լինի եկեղեցիների միավորման խնդիրը ներկայացնել միայն Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության համատեքստում, երբ ռազմաքաղաքական օժանդակության դիմաց անհրաժեշտ էր դավանաբա-

---

[13] Ստ.Օրբէլեան, էջ 439:
[14] Նույն տեղում, էջ 460:
[15] Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը /1165-1178 թթ./, Երևան, 1995, էջ 192-205:
[16] Ստ. Օրբէլեան, էջ 448:
[17] Կղ.Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ, հ. I, Հռոմ, 1650, էջ 435-507:

նական գիջումներ կատարել: Այստեղ որոշակի դեր խաղաց նաև հայ հասարակության ներսում ձևավորված իրավիճակը. «Ջհաւատացեալ Հայս ժամանակին բաժնէ չորս դաս. - Ա. Սսոյ միաբանքն, որք ազգային ծէսը պահելով՝ ինչ ինչ ընդունած և միաբանած են ընդ հռովմէականաց: - Բ. Սոնքք բաժանեալքն ի Սըսեցւոց: - Գ. Ծայքք, յունածէսքն հայալեզուք ի Հոռոմոց տունն, յեզնկայէ մինչ ի Կեսարիա: - Դ. Միաբանող Հայք /Ունիթորք/, որք մասամբ Լատինաց ծէսն ընդունած են...»:[18] Այս միջավայրերում հայոց կաթողիկոսությունը նույնաբնույթ հատկանիշներով չէր կարող կազմակերպվել, ուստի. ա/ կարող էր հրաժարվել Ա,Գ,Դ միջավայրերից, բ/ փորձել այնտեղ վերականգնել ավանդական մշակութային մոդելը, գ/ այն վերակառուցել բոլորի համար ընդունելի մոդելի շրջանակներում: Սսի հայոց կաթողիկոսությունը ձեռնամուխ եղավ երրորդ տարբերակի իրագործմանը: Այս դեպքում անհրաժեշտ էր գտնել այնպիսի մոդել, որն ի վիճակի լիներ ապահովելու հայ հասարակության դավանաբանական կազմակերպման նույնականությունը: Նման մոդելի հիմքում կարող էին դրվել այն հատկանիշները, որոնք ընդունվել էին հայկական մի շարք միջավայրերում, սակայն հայկական չէին:[19] Եթե հայոց կաթողիկոսությանը հաջողվեր իրագործել հայկական դավանաբանական միջավայրի վերակառուցումը, ապա կփոխվեր նաև նրա կազմակերպման ձևը. «Եւ թեպէտ նա /իմա՝ պապականությունը/ ունի զայսքան լիութիւն իշխանութեան, սակայն կամի, թէ այլ եկեղեցիքն հոգացողակիցք լիցին նորա ի յառաջնորդութիւն հօտիցն իւրեանց. և սակս այսորիկ կամեցաւ շնորհել զանազան յատուկ իշխանութիւնս բազում այլ եկեղեցեաց, մանաւանդ նոցա, որք են պատրիարգական...»:[20] Վերակառուցված դավանաբանական միջավայրում հայոց կաթողիկոսության համար առավել հեշտ կլիներ յուրացնել համահայկական կենտրոնի կարգավիճակ, քանի որ նա կկազմակերպվեր նույնաբնույթ հատկանիշների շրջանակներում: Եթե Սսի կաթողիկոսությանը չհաջողվեր իրագործել այս խնդիրը, ապա հեռանկարում նա կդառնար հատվածական կենտրոն:

Վերակառուցվող մոդելում հայոց կաթողիկոսության կազմակերպումը կարելի է ներկայացնել կառուցվածքային և գաղափարական տեսակետներից: Առաջին դեպքում նա ներառվում էր տիեզերական եկեղեցու աստիճանակարգության մեջ և գլխավորում էր միայն հայոց եկեղեցական նվիրապետությունը: Գաղափարական առումով նա միավորելու էր հայկական էթնոսի բոլոր հատվածները:

---

[18] Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 123:
[19] Կղ. Գալանոս, էջ 435-507:
[20] Նույն տեղում, էջ 410:

Հայոց կաթողիկոսության կազմակերպման հեռանկարների շարքում կարելի է առանձնացնել նաև այն, որ փորձում էին իրենց իրավունքները տարածել ամբողջ Արևելքի եկեղեցիների վրա:[21] Սակայն այս ծրագրերը չիրագործվեցին և Սսի հայոց կաթողիկոսությունը վերածվեց հատվածական կենտրոնի:

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում հայ հասարակության կազմակերպումը կարելի է ներկայացնել որպես տարածաէթնոմշակութային համակարգ, որը չուներ համահայկական քաղաքական կենտրոն: Հռոմկլայում հաստատված հայոց կաթողիկոսությունը փորձում էր յուրացնել վերնակենտրոն կարգավիճակ: Դրությունը փոխվեց, երբ կաթողիկոսությունը տեղափոխվեց Սիս և ներառվեց Կիլիկյան Հայաստանի վարչաքաղաքական համակարգում: Համահայկական կենտրոնի կարգավիճակ ունենալու համար Սսի հայոց կաթողիկոսությունը փորձեց յուրացնել Սնտիոքի պատրիարք տիտղոսը և վերակառուցել ավանդական մշակութային մոդելը: Սակայն նրան չհաջողվեց իրագործել այս խնդիրները և վերածվեց հատվածական կենտրոնի:

[21] Ս. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, մասն Ա, Պէյրութ, 1960, էջ 1890: